



Էսենցիալ դող. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

ԻՆՉ Է ԱՅՆ

Էսենցիալ դողը (ԷԴ) ամենահաճախ հանդիպող շարժողական խանգարումն է: Այն նաև հայտնի է որպես բարորակ էսենցիալ դող, ընտանեկան դող կամ ժառանգական դող: ԷԴ-ով հիվանդները կարող են ունենալ ձեռքերի, գլխի, ձայնի կամ մարմնի այլ հատվածների չվերահսկվող դող: Հիվանդությունը սովորաբար սկսվում է չափահաս տարիքում և կարող է տարիքի հետ վատանալ: Հատկանշական է, որ դողը առավել նկատելի է, երբ ձեռքերը պարզած են առաջ կամ նուրբ շարժումներ կատարելիս, ինչպես օրինակ բաժակ պահելիս, գդալ օգտագործելիս կամ գրելիս: Դողը սովորաբար դադարում է, երբ դաստակները/ձեռքերը ամբողջապես թուլացած են, օրինակ երբ դրված են ծնկներին: Մթերքը հաճախ ժամանակավորապես վատացնում է դողը:

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

ԷԴ-ի պատճառը հայտնի չէ, սակայն հիվանդների կեսից ավելին ունի դողով ընտանիքի այլ անդամ: Գիտնականները չեն գտել գեն(եր)ը, որոնք առաջացնում են ԷԴ-ը: Ընտանեկան պատմություն ունեցող հիվանդների մոտ ախտանիշները ավելի վաղ տարիքում սկսվելու հակում ունեն: Գիտնականները կարծում են, որ ԷԴ-ը զարգանում է գլխուղեղում, սակայն հիվանդների գլխուղեղի սկանավորումը նորմալ է: ԷԴ-ի համար չկա ախտորոշիչ հետազոտություն: Այնուամենայնիվ, Ձեր բժիշկը կարող է ստուգել Ձեր արյունը այլ խնդիրների համար, օրինակ վահանագեղձի հիվանդության, որը կարող է վատացնել դողը: Որոշակի դեղեր նույնպես կարող են վատացնել դողը:

ԱՐԴՅՈՔ ԿՄ՝ ԲՈՒԺՈՒՄ

Գոյություն ունի արդյունավետ բուժում դողը նվազեցնելու համար, սակայն ապաքինում չկա: Որոշ հիվանդներին կարող է օգնել ծանր բաժակ, սպասք օգտագործելը և նույնիսկ փոքր կշռաքարեր դաստակներին կրելը: Որոշ հիվանդներին կարող են օգնել դեղերը: Դեղերը սովորաբար տրվում են փորձնական հիմքով: Որոշները օգնում են ավելի լավ քան մյուսները, կախված հիվանդից: Դեղերը, որոնք կարող են օգնել ներառում են.

- բետա-պաշարիչներ, օրինակ պրոպրանոլոլ,
- հակացնցումային դեղեր, ինչպիսիք են պրիմիդոնը, զաբապենտինը, տոպիրամատը և կլոնազեպամը:

Ձեր բժիշկը կարող է առաջարկել դադարեցնել կոֆեինի, այլ խթանիչների և որոշ դող-առաջացնող դեղերի ընդունումը: Դողի որոշակի ձևերով հիվանդներին կարող են օգնել բուտուլտոքսինի ներարկումները:

Բուտուլտոքսինը ներարկվում է դող առաջացնող մկանների մեջ, ինչը ժամանակավորապես թուլացնում է մկանները՝ դողը նվազեցնելու համար: Այս ներարկումները պետք է կրկնվեն տարվա ընթացքում երկուսից չորս անգամ և առավել արդյունավետ են պարանոցի և ձայնի դողի ժամանակ:

Չնայած նրան, որ դեղորայքային բուժումը կարող է օգնել դողով որոշ հիվանդներին և պետք է փորձարկվի առաջին հերթին, նրանք, ովքեր ունեն շատ արտահայտված դող կարող են մտածել վիրահատական միջամտության մասին: Ձեր նյարդաբանը կարող է Ձեզ խորհուրդ տալ Ձեր խնդրի համար առավել համապատասխան բուժման տարբերակը: ԷԴ-ի համար գոյություն ունի վիրահատության մի քանի տարբերակ, որոնք են.

- թալամոտոմիան. գլխուղեղի վիրահատության տեսակ է, երբ քայքայում են գլխուղեղի մի հատվածը՝ թալամուսը,
- գլխուղեղի խորանիստ ստիմուլյացիան (ԳԽՍ). թալամուսի վրա վիրահատության այլ տեսակ է, երբ բարակ էլեկտրական լարը (նաև կոչվում է էլեկտրոդ) տեղադրվում է թալամուսի մեջ և միացվում է պեյսմեյկերի նման սարքի, որը գտնվում է կրծքավանդակի մաշկի տակ,
- այլ վիրահատական միջամտություններ:

ԱՐԴՅՈՔ ԷՍԵՆՑԻԱԼ ԴՈՂԸ ՊԱՐԿԻՆՍՈՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ Է

Ոչ ԷԴ-ը մոտ 10 անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան Պարկինսոնի հիվանդությունը (ՊՀ): Ի տարբերություն ԷԴ-ի, ՊՀ-ն ժամանակ ձեռքի դողն ավելի ակնհայտ է, երբ հիվանդի ձեռքերը թուլացած վիճակում են և ոչ թե, երբ դրանք օգտագործվում են գործողություններում: Ի տարբերություն ԷԴ-ի, ՊՀ-ն, այլ նշաններն ընդգրկում են շարժումների դանդաղկոտությունը, քայլելու դժվարությունը և գնման ժամանակ հայտնաբերվող այլ նշանները:



Էսենցիալ դող. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԱԿՆԿԱԼԵԼ՝ ԱՊՐԵԼՈՎ ԷԴ-ՈՎ

ԷԴ-ը չի կարճացնում Ձեր կյանքի տևողությունը: Դողը կարող է ուժեղանալ ժամանակի ընթացքում, սակայն փոփոխությունը որպես օրենք դանդաղ է, սովորաբար երկար տարիների ընթացքում: Ի վերջո, որոշ հիվանդներ կարող են ունենալ անաշխատունակության որոշ մակարդակ, օրինակ գրելու, ուտելու և խմելու դժվարություն և նույնիսկ սոցիալական դժվարություններ: Թեթև դողը սովորաբար չի պահանջում բուժում և վաղ բուժումը չի կանգնեցնում կամ դանդաղեցնում ախտանիշների բնական փոփոխությունները: Սկսեք բուժումը միայն այն ժամանակ, երբ դողը ազդում է Ձեր առօրյա գործունեության վրա կամ խնդիրներ է ստեղծում Ձեզ համար: